

Հում մետաքսի հայ վաճառականները թափանցած էին ոչ միայն Եւրոպայի ամէն կողմը, այլ նաեւ Ամերիկա:

Ինչպէս տեսանք, անոնց կարաւանները երեք զլխաւոր ուղիներով երկրին ներսերէն ապրանք կը փոխադրէին: Թաւրիզ-Հալէպ, Թաւրիզ-Շամախի-Ասդրախան-Մոսկուա կամ Կասպից ծովու դիծ, եւ Թաւիզ-Կ. Պոլիս: Երկրորդական ճամբաներ էին Թաւրիզ-Կարին-Թոքթաթ-Իզմիր կամ Թաւրիզ-Հալէպ-Անկիւրիա-Իզմիր զիծերը:

Մեզի ծանօթութիւն պակեցաւ Թուրքիոյ մէջ մշակուած մետաքսի մասին, թէ եւ երբեմն կը յիշուի ատոր գոյութիւնը, առանց ցոյց տալու արտադրութեան վայրը: Պուրսայի եւ Սկիւտարի արհեստանոցներուն հայթայթըւած մետաքսը հաւանարար մեծ մասամբ Պարսկաստանէն կուգար, թէ եւ մաս մ'ալ տեղական բերք էր: 1844-ին իսկ կը վկայուի որ «Ամասիոյ զլխաւոր արտադրութիւնն է մետաքս, որմէ տարեկան 600 հակ Եւրոպա կ'արտածուի»¹⁾:

Վենետիկի առեւտրական դիրքի անկումէն ժամանակի մը համար օգտուեցաւ հարաւային Ֆրանսայի Մարսիլիա քաղաքը, ուր սկսան յաճախել հայ վաճառականները: «Ջուղայեցիք՝ ժէ. դարի կէսերուն մեծ դործունէութիւն են ցոյց տուել նաեւ Գաղղիայում, յատկապէս Մարսէլում»²⁾: Ֆրէտէրիք Մաքլէր

1) The Nestorians and their Rituals.— Rev. George Percy Badger.— London, 1852, Vol. I, p. 21:

2) «Հոլլանդա եւ Հայերը»:— Մարուխան, Հանդ. Ամս. 1926, էջ 569, ծան. 1:

բազմաթիւ վաւերաթուղթեր հրատարակեց այս մասին՝ Մարսիլիոյ քաղաքին զանազան զիւաններէն առնելով, բոլորն ալ ժէ. դարու վերաբերող: Լաւ կ'ըլլայ օր մը անոնք ամբողջութեամբ հայերէն թարգմանուած տեսնել: (3)

«Պարսկաստանի մետաքսը մինչեւ 1634 բերում էր Ջուլուսիայից նախ Մարսէլ եւ ապա այստեղից ուղարկուած էր Եւրոպայի միւս կողմերը, ի մէջ այլոց եւ Հոլանդա. որովհետեւ գաղղիական կառավարութիւնը ատան մաքս էր առնում, այն է ամէն մի հակի 16 Ֆրանք: Բայց երբ 1634-ին Գաղղիա այս հարկը չիներ 112 Ֆրանք, այն ժամանակ այս արտածումը դադրեցաւ: Այնուհետեւ ուրիշ եւրոպական երկիրներ, որոնց թւում Անգլիա եւ Հոլլանդա, Ջուլուսիայից եւ առհասարակ Մերձաւոր Արեւելքից ուղղակի սկսան բերել տալ»⁴⁾:

Մաքլէրի հրատարակած վաւերագրութեանց մէջ հում մետաքսի վաճառականները Ջուղայեցիներ (Նոր) են, որոնցմէ 1639 վկայարի մը մէջ կը յիշուին Խօջայք Ֆարհատ, Նօնդիազ եւ Յովաննէս Մկրտիչ «Հայաստանի Սպահան քաղաքէն եւ Պարսից թագաւորին հպատակ»: Խօջայ Մկրտիչ մը զեռ կը յիշուի

3) Revue des Etudes Arme'niennes.— Tome II, Fasc. I, pp. 7-64:

4) Մարուխան, էջ 570: Ծանօթութիւնը առնուած է Մակլէրի հրատարակած թուղթերէն մէկէն 1658 (Revue, էջ 40), ուր կը վկայուի, որ հայերը երբեմն Մարսէլ կը բերէին մէկ նաւու մէջ 1000-1,200 հակ մետաքս, մինչ 1658-ին 100 իսկ չեն բերեր: